[ԱՆՎԵՐՆԱԳԻՐ. ԱՐԾՎԱԽՈՅԱԿ ՍՅՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ]

Արծվախոյակ սյունը տաճարի հատակագծում իր գրաված դիրքով և նշանակությամբ առանձնահատուկ է և նման չէ մյուս սյուներին: Այդպիսի սյուներ Զվարթնոցում ընդամենը չորսն են և տեղադրված են չորս մայր մույթերի շրջանց սրահին ուղղված վերջավորություններում, իր վերնամասում կապված լինելով նրան, հանդիսանալով նրա օրգանական մասը:

Մայր մույթի այդ վերջավորությունը կարող էր լուծվել և 70-75 սմ ճակատ ունեցող սովորական պատի ձևով չորս շարքի կազմությամբ, սակայն այս վերջինս պակաս հետաքրքիր լինելուց զատ, պակաս կրողունակ կլիներ, քան մեկ ամբողջական քարից պատրաստված սյան բունը:

Զվարթնոցի նոր պեղված ավերակը ուսումնասիրելիս, անդրադառնալով արծվախոյակ սյանը, Թորոս Թորամանյանը գրում է. «Ինձի պես շատերը երկար մտածեցին, թե ի՞նչ պատճառով զետեղված էին գմբեթակիր մայր սյուներու ետևը չորս մեծ, անջատ, կլոր սյուները, որոնք, բացի այն, որ սյունազարդի սյուներին ավելի հաստ էին, ունեին բոլորովին արտասովոր ձևով, անհավասար կողմերով տարանկյուն խոյակներ, որոնց ճակատին վրա քանդակված էին գեղակերտ, թևատարած մեծ արծիվներ»[1]:

[1] Թ. Թորամանյան, Զվարթնոց, Գագկաշեն, Երևան, 1984, էջ 26-27:

Թորամանյանը իր «Զվարթնոց եկեղեցին» հայտնի հոդվածում մանրամասն նկարագրում է, թե ինչ դեր է խաղացել արծվախոյակ սյունը «աղոթող ժողովրդին բաժինը ...», այսինքն՝ բոլորակ սրահը ծածկելու գործում: Այս կարևոր խնդրի լուծման կերպը Թորամանյանի գնահատմամբ հանճարեղ է, նա գրում է. «Այդ արտասովոր խոյակներով սյուները այդ տեղերը դրված էին ոչ թե զարդի և վայելչության համար, այլ իրենց հատուկ խիստ կարևոր պաշտոններով, որոնց մեկն ալ կարծես, ի միջի այլոց, մեզ հրավիրել էր 14 դար հետո ժամանակի մեծ վարպետի հանճարին առաջ հարգանքով ու ակնածանքով խոնարհիլ»[2]:

Զվարթնոցից [գծ. 1] առաջ ներքին խաչաձևը արտաքին սրահի մեջ առնված այնպիսի հուշարձաններ, ինչպիսիք Միլանի Սան-Լորենցոն [գծ. 2], Բոսրան [գծ. 3], Սելևկիան, Ապամեան [գծ. 4], մի կարևոր հարցում տարբեր են Զվարթնոցից: Սան-Լորենցոյում շրջանցող սրահի արտաքին պատը հետևում է կենտրոնական մասի պարագծերին՝ կրկնում է այն: Բոսրայում ներքին խաչաձևը շրջանցող բոլորակ սրահը առնված է արտաքուստ ուղղանկյուն ծավալի մեջ, Սելևկիան ներքուստ խաչաձևը կրկնում է Բոսրային, արտաքին պարագծերով կրկնում է Սան-Լորենցոյին: Այս բոլորում կենտրոնը ընդգրկող սրահների ծածկերի ներքին ու արտաքին հենարանները զուգահեռ չեն միմյանց, մի բան, որ անհրաժեշտ է թաղային ծածկեր ստեղծելու համար, ենթադրել է տալիս, որ սրանցում սրահների ծածկերը իրականացվել են փայտանյութով: Այս հանգամանքը կաշկանդել է ճարտարապետներին ստեղծել ներքուստ ու արտաքուստ ցանկալի հետաքրքիր ձևեր ու տարածություններ: VI դ. կառուցված տվյալ շինությունները իրենց ճարտարապետական արվեստով արտակարգ երևույթներ չեն հանդիսացել: Այս առումով Զվարթնոցը անհամեմատելի է վերոհիշյալ նախորդների հետ, մի այլ մակարդակի արտահայտություն է, այս նկատի ունենալով է, որ Ա. Լ. Յակոբսոնը Զվարթնոցի վերաբերյալ գրում է. «Это был апофеоз развития армянской архитектурной класики ...»[3]:

---

[2] Նույն տեղում, էջ 27:

[3] А. Л. Якобсон, Закономерности в развитии средневековой архитектуры, Ленинград, 1985, стр. 47.

Այս իրավիճակը հնարավոր է դարձել շնորհիվ Զվարթնոցի ճարտարապետի, որը աշխարհ է բերել արծվախոյակ սյունը հատակագծի տվյալ տեղում: Արծվախոյակ սյունն ու իր կատարած դերը հեղաշրջել են մեծ տետրակոնխերի սկզբունքները, դառնալով առիթ ճարտարապետական ուղղության վերափոխող վերածննդի, նոր կոմպոզիցիաների, հորինվածքների նորանոր նվաճումների հասնելու համար:

Արծվախոյակ սյան գաղափարը չկա նույնիսկ Զվարթնոցին ժամանակով այնքան մոտ կանգնած Ապամեայում, չասենք արդեն Բոսրայի, Սելևկիայի մասին:

Արծվախոյակ սյունը հնարավոր դարձրեց Զվարթնոցը դարձնել Զվարթնոց, ձև ու իմաստ տալով ներքին կառուցվածքները լուծել նորովի, աննախադեպ ոչ միայն հայ ճարտարապետության կառուցողական արվեստում:



Գծ. 1 – Զվարթնոցի հատակագիծը:



Գծ. 2. *– Միլանի Սան-Լորենցո եկեղեցու հատակագիծը:*



Գծ. 3 – Բոսրայի եկեղեցու հատակագիծը:



Գծ. 4 – Ապամեայի եկեղեցու հատակագիծը: